# ՆԵՐՍԵՍ ԼԱՄԲՐՈՆԱՑՈՒ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

*Լիանա Դալլաքյան*

Ներսես Լամբրոնացին հանդիսանում է Կիլիկյան Հայաստանի պատմության այն եզակի գործիչներից մեկը, ով իր գործունեության ընթացքում աչքի է ընկել թե՛ հոգևոր, թե՛ քաղաքական և թե՛ դիվանագիտական ասպարեզում: Չնայած Ներսես Լամբրոնացու գործունեությունը շատ կարևոր է, այնուամենայնիվ մինչ օրս էլ ժամանակակից գիտական գրականության մեջ շատ խորությամբ չի ուսումնասիրվել նրա կյանքի և գործունեության պատմությունը, և մի շարք կարևոր հարցերին չեն տրվել սպառիչ պատասխաններ:

Կիլիկյան Հայաստանի նշանավոր հոգևոր ու քաղաքական գործիչ Ներսես Լամբրոնացին ծնվել է 1153 թ.: Նա եղել է Կիլիկիայի Լամբրոնի բերդատեր, Հեթումյան իշխան Օշին Բ-ի և Ներսես Շնորհալու Շահան եղբոր դուստր Շահանդուխտ Պահլավունու որդին: Լամբրոնացու մեծ պապը՝ Օշին անունով մի ազնվական, Գանձակի կողմերից 1073 թ. տեղափոխվում է Կիլիկիա, ուր կուսակալ էր նրա ծանոթ ու բարեկամ Ապլղարիպ Արծրունի իշխանը: Սա տալիս է Օշինին Լամբրոն ամուր բերդը Տավրոսյան լեռների մեջ: Օշինը և նրա որդին՝ Հեթումը, մնում են կայսերական ծառայության մեջ և դառնում են այն կողմերի հայտնի իշխանները[1]: Հենց Լամբրոն բերդի անունից էլ Ներսեսը ստացել է իր Լամբրոնացի անունը: Իսկ իր Ներսես անունը Լաբրոնացին ստացել է Ներսես Շնորհալուց: Նրա առաջին անունը Սմբատ էր: Ներսեսն ուներ չորս եղբայր՝ Հեթում, Ապիրատ, Շահնշահ, Գրիգոր, և երեք քույր՝ Մարիամ, Շուշան, Տալիթա: Ներսեսի առաջին ուսուցիչն ու դաստիարակը եղել է մայրը, ումից և սովորել է հունարեն: Բացի հունարենից՝ Լամբրոնացին տիրապետել է նաև լատիներենի, ասորերենի, եբրայերենի և ղպտերենի: Ներսես Լամբրոնացին կրթություն է ստացել Սկևռայի վանքում, ապա՝ Հռոմկլայի կաթողիկոսարանի բարձրագույն դպրոցում՝ հայոց կաթողիկոսներ Գրիգոր Գ Պահլավունու և Ներսես Շնորհալու հովանավորու-

[1] **Աբեղյան Մ.,** Երկեր, Հատոր Դ, Երևան, 1970, էջ 158:

թյամբ: Վանքում ուսանելուն զուգընթաց, Ներսեսը ստանում է նաև ընտանեկան կրթություն և դաստիարակություն: Շնորհալին, տեսել է Ներսեսին մինչ վերջինիս հոգևորական դառնալը, երբ 1165 թ. Գրիգոր Գ Պահլավունի կաթողիկոսի խորհրդով Հռոմկլայից մեկնել է Լամբրոն՝ հարթելու Ռուբինյան Թորոս Իշխանի և Լամբրոնացու հոր՝ Օշինի վեճը: Այդ ժամանակ Օշինի և Թորոս իշխանի միջև սկսվել էին եղբայրասպան և արյունալի վեճեր: Եվ որպեսզի այդ աղետը կանխվի, Ներսես Շնորհալին, որպես հաշտարար միջնորդ, ուղարկվեց նրանց մոտ: Հաշտությունը կայանալուց հետո Օշինը Շնորհալուն հրավիրեց տեսնելու Շահանդուխտին ու նրա զավակներին: Ահա այստեղ էր, որ Սմբատը ճանաչեց ու սիրեց իր մորեղբորը: Եվ Շնորհալին էլ իր հերթին մեծ համակրանք սկսեց տածել Սմբատի հանդեպ:

Դեռևս վանքում ուսանելու տարիներին Սմբատն այնքան էր տարված հունարենով, որ շատ էր ցանկանում գնալ ու շրջել հունաց կողմերում: Իր այդ հետաքրքրության բավարարման համար էլ նա մի օր հեռանում է վանքից ու գնում Կիպրոս: Օշինի ընտանիքը երկար ժամանակ որոնում էին նրան: Նրանց ծանոթ էր պատանու մեջ եղած շրջելու բուռն հակումը: Վերջապես լսեցին, որ նա Կիպրոսում է: Հարազատներից մի քանիսը գնացին Կիպրոս, ցնցոտիների մեջ պարուրված գտան պատանուն և վերադարձրին Լամբրոն[1]:

Մի անգամ Ներսեսի հայրը նրան տանում է Կ. Պոլիս, Մանվել կայսեր մոտ: Կայսրը Ներսեսին հորդորում է մնալ արքունիքում. «Կմեծարեմ քեզ առաւել փառքով,- ասաց, քան քո հօրը»: Մանուկը պատասխանեց. «Եթե անանց լինէին մեծութիւնները, կլսէի խօսքերդ, սակայն ես շտապում եմ հասնել անանց մեծութեանը»: Այսպես խոսեց նա Անտիոքի լատին կոմսի հետ[2]:

Ներսեսը 16 տարեկան էր, երբ մահանում է հայրը: Վերջինս Հեթում որդուն կտակել էր հայրենի Լամբրոնի իշխանությունը, իսկ Սմբատին՝ Սկևռայի վանքի առաջնորդությունը: Բայց Սմբատը լցված էր ճգնության և անապատական կյանքի տենչանքով, և այլ էին նրա սրտի խորհուրդները: Նա ցանկանում էր առանձնանալ բոլորից: Այս ամենն իմանալով՝

---

[1] **Հակոբյան Գ.,** Ներսես Լամբրոնացի, Երևան, 1971, էջ 49:

[2] Գանձասար Բ, Մեր երանելի հայր Ներսես Լամբրոնացու վարքը, Երևան, 1992, էջ 302:

նրա մայրը, որպեսզի իր զավակը չհեռանա իրենից, որոշում է ուխտի գնալ Երուսաղեմ: Նա իր հետ Հռոմկլա է տանում պատանի Սմբատին՝ սուրբ հայրապետ Ներսես Շնորհալուց Օրհնություն ստանալու նպատակով: Շնորհալին պատանի Սմբատին ձեռնադրում է քահանա՝ տալով իր անունը: Թեև Հռոմկլայի միջավայրն առավել հետաքրքրական էր ու ընդարձակ, քան Սկևռա անապատը կամ Լամբրոնի դղյակը, բայց Ներսեսին, այնուամենայնիվ չէր հաջողվում ամուր կապվել այս նոր միջավայրի հետ: Ուստի նա երկար չկարողացավ մնալ Հռոմկլայում: Կաթողիկոսն անմիջապես նկատել էր պատանու որոնող ու անհանգիստ բնավորությունը: Ուստի Շնորհալու հրամանով Ներսեսը գնում է Սև լեռան վանքը, որտեղ մնում է գիտնական վարդապետ Ստեփանոսի մոտ՝ օրեցօր փայլելով իր սրբությամբ ու իմաստությամբ: Այստեղ Ներսեսը ծանոթացավ ոչ միայն վանական կյանքի կարգ ու կանոնին, այլև հնարավորություն ունեցավ տեսնելու և օգտագործելու այդ վանքերում եղած հարուստ մատենադարանները: Վանականները, տեսնելով Ներսեսի հոգու եռանդը դեպի հոգևորը, նրան խնդրում են իր քաղաքում ծավալել քարոզչական գործունեություն: Հենց քարոզչական նպատակով էլ Ներսեսը վերադառնում է Լամբրոն: Նա ընդամենը 18 տարեկան էր, երբ որպես կատարյալ ուսուցիչ, սքանչելի ու վսեմ խոսքերով քարոզում էր եկեղեցում՝ իբրև մի նոր Ոսկեբերան: Ներսես Լամբրոնացուն իր արտակարգ խոսքի համար անվանել են նաև երկրորդ Պողոս Տարսոնացի առաքյալ: Շուտով նրա անունն այնքան մեծ հռչակ է ձեռք բերում, որ բոլոր քաղաքացիները նրան խնդրում են դառնալ իրենց եպիսկոպոսը և մոտակա Սկևռայի վանքի առաջնորդը: Բայց Ներսեսն առանձնանում է իր հոգևոր հոր՝ Հովհաննեսի մոտ, Տավրոսի լեռների մեջ, Սուրբ Գևորգ եկեղեցու մոտ գտնվող Շուղրի անապատի Սուրբ Աստվածածին կոչված վանքում: Այստեղ Ներսեսն առանձին խցում զբաղվում է Սուրբ Գրքի, սուրբ հայրերի խոսքերի ընթերցանությամբ: Նա միայն կիրակիներն էր դուրս գալիս իր խցից, գնում էր վանքի եկեղեցի՝ Սուրբ Պատարագ մատուցելու: Ներսեսն ամբողջությամբ նվիրվել էր մենակյաց ու ճգնակեցական կյանքին: Երբ ծանոթանում ենք Լաբրոնացու կյանքի այս տեսակ մանրամասնություններին, հասկանում ենք, որ այսպիսի կենցաղ ունեցող մարդը շատ առումներով կարող է օրինակ ծառայել ժամանակակիցների ու իրեն հաջորդած սերունդների համար: Չէ՞ որ մեր օրերում շատ քիչ կարող ենք հանդիպել հոգևոր այսպիսի արժանիքներով օժտված անձանց, ովքեր

այնքան պետք են հասարակ ժողովրդին: Ներսես Լամբրոնացին այն վառ օրինակն է, ով կարող է սերմանել մարդասիրություն ու գթասրտություն, խաղաղության դրսևորում ոչ միայն անհատների, այլև ընդհանուր ժողովրդի մեջ:

Ներսես Լաբրոնացին ոչ միայն սովորեցնում, ստեղծագործում, մեկնում, թարգմանում և միաժամանակ ուրիշներին էր քարոզում և հանձնարարում գրքեր ընդօրինակել, այլև ինքն էր եռանդուն կերպով արտագրում գրքեր՝ վանքերի, եկեղեցիների և իր սեփական մատենադարանի համար[1]: Ինքը՝ Լամբրոնացին, ևս ձեռագրեր էր ընդօրինակում. «Ինքն ձեռամբ իւրով գրեաց կրկին զԱստուածաշունչ գիրս եւ զամենայն բանս սրբոց հարցն»[2]:

1172 թ. Ներսեսը վերադառնում է Լամբրոն, ուր նրան կարոտով սպասում էին մայրը, քույրերն ու եղբայրները: Նա այստեղ առաջին անգամ հանդես է գալիս հոգևորականի կոչումով: Վերափոխման տոնին Ներսեսը տաճարում արտասանում է իր գրական երախայրիքը: Սա Լամբրոնացու առաջին ելույթն էր: Նրա արտասանած այս ներբողյանը հիացնում է բոլորին:

Մեծանալով Շնորհալու ձեռքի տակ՝ Ներսես Լամբրոնացին սիրում է ուսումն ու գիտությունը, և վաղ երիտասարդական տարիքից անխոնջ պարապում է գրականությամբ՝ անելով թարգմանություններ և հորինելով մեկնություններ ու այլ կրոնական երկեր: Բացի այդ՝ ազդվելով Ներսես Շնորհալուց՝ նա սերտ փարում է եկեղեցիների միության խնդրին, նկատմամբ հետևում է իր մեծ ուսուցչի, հետո և Գրիգոր Տղայի ուղղությանն ու հայացքին[3]:

1175 թ. Շնորհալու հաջորդը՝ Գրիգոր Դ Տղան, իր մոտ է կանչում Ներսես Լամբրոնացուն և նրան ձեռնադրում Կիլիկիայի Տարսոն քաղաքի արքեպիսկոպոս: Բայց այս ամենի հետ կապված Լամբրոնացու հայացքները բացասական էին: Նա փորձել է հրաժարվել այդ պաշտոնից, քանի որ ինքը տակավին 22 ամյա երիտասարդ էր և դեռևս հասուն չէր նման պաշտոնի համար: Կանոնական օրենքը թույլատրում էր եպիսկոպոս ձեռնադրել միայն 30 տարեկանից բարձր անձանց: Չնայած այս

---

[1] **Հակոբյան Գ.,** նշվ. աշխ., էջ 61:

[2] **Ակինյան Ն.,** Ներսես Լամբրոնացին, Վիեննա, 1956, էջ 27:

[3] **Աբեղյան Մ.,** Երկեր, Հատոր Դ, էջ 158-159:

ամենին, Լամբրոնացին ուներ գիտելիքների այն պաշարը, որն անհրաժեշտ էր եպիսկոպոս ձեռնադրվելու համար: Միակ խոչընդոտը նրա տարիքն էր, սակայն դա էլ անհաղթահարելի արգելք չէր: Ժամանակն ու հանգամանքները երբեմն ստիպում էին շրջանցել եկեղեցական կանոնները: Կիլիկիայի հոգևորականների մեջ քիչ չեն այնպիսիները, ովքեր, որպես բացառություն, քահանայի աստիճանից հետո անմիջապես ստացել են եպիսկոպոսի կոչում: Նրանք դրան արժանացել են իրենց արտակարգ պատրաստակամության և գործունեության մեծ եռանդ ունենալու շնորհիվ:

Այն ժամանակ, երբ Գրիգոր Տղան ցանկանում էր Լամբրոնացուն տալ եպիսկոպոսի պաշտոն, Տարսոնի հոգևոր առաջնորդը Գրիգոր Ապիրատ եպիսկոպոսն էր: Եվ որպեսզի Լամբրոնացին նշանակվեր Տարսոնի եպիսկոպոս, Գրիգոր Տղան Ապիրատին տեղափոխում է Անտիոք՝ դարձնելով նրան այնտեղի հոգևոր առաջնորդ: Իսկ Լամբրոնացին եպիսկոպոս ձեռնադրվելուց անմիջապես հետո տեղափոխվում է Տարսոն[1]:

Ներսես Լամբրոնացին մշտապես բոլորի հանդեպ ցուցաբերում էր մեծ հոգատարություն: Նա ծավալում է բարենորոգչական լայն գործունեություն: Հատկապես առանձնահատուկ ուշադրություն է դարձնում Սկևռայի վանքին կից ուսումնական հաստատությանը՝ այն համալրելով շնորհալի երիտասարդներով: Նա նույնիսկ Գրիգոր Տղայից թույլտվություն է ստանում վանքի դպրոց հրավիրել մանրանկարիչ և գրիչ Գրիգոր Արևելցուն, որպեսզի Սկևռայում էլ այդ արվեստի ուսուցումն ու մակարդակը բարձրանա: Նրա ջանքերով հարստացվում է վանքի մատենադարանը, բարելավվում է ձեռագրերի պահպանման ու հարստացման գործը: Լամբրոնացու անվան հետ է կապվում նաև ՍՍի մեծահամբավ համալսարանի բացումը. «Ի յետին դարս, ի սկիզբն ԺԸ-ի, յիշէ Եփրեմ կաթողիկոս ի Սիս վարժարան մի՝ համալսարան Ս. Ներսես Լամբրոնացւոյ անունելով»[2]:

Լամբրոնացու պաշտոնավարության ժամանակներում ժողովրդի մեջ թուլացել էր հավատը: Լամբրոնացին շատ լավ նկատում էր այս ամենը: Նա ոտքով շրջում էր ոչ միայն իր թեմի սահմանների վանքերում: Նրան

---

[1] **Սամվել Անեցի**, Հաւաքմունք ի գրոց պարմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 230:

[2] **Ալիշան Ղ.,** «Սիսուան», Վենետիկ, 1885, էջ 224:

կարելի էր տեսնել գյուղերում, լեռների խորշերում ու քարանձավներում գտնվող մենաստաններում: Լամբրոնացուն կարելի էր տեսնել նաև Երուսաղեմում, Բյուզանդիայի մայրաքաղաքում և իհարկե հայոց արքունիքում: Նրա մասին պատմվում է, թե մի անգամ նա տղմոտ ջրի մեջ ընկած մի հարբած մարդ է տեսնում: Նա այդ մարդուն ոտքի է կանգնեցնում, մաքրում շորերը և ուղեկցում տուն: Այդ օրը Լամբրոնացին ամբողջ գիշեր լաց է լինում այն բանի համար, որ իրենք՝ հոգևորականները, չեն կարողացել բարոյակրթել մարդկանց այն աստիճանի, որ նրանք կանգնեն առաքինության ու բարեպաշտության ճանապարհին: Նա համարում էր, որ աշխարհիկ և հոգևոր առաջնորդները շատ քիչ են զբաղվում ժողովրդի հարցերով: Լամբրոնացին հավասարապես էր վերաբերվում հասարակ ժողովրդին, ձեռք էր մեկնում նրան, ում պետք էր: Նրա մարդասիրության համբավը դուրս էր եկել երկրի սահմաններից:

1177 թ. Հունվարին հունաց կայսր Կիռ Մանվելը և պատրիարք Միքայելը երկու նամակ են գրում՝ ուղղված Գրիգոր Տղա կաթողիկոսին: Նրանք այդ նամակներով առաջարկում էին կաթողիկոսին, որ վերջինս զբաղվի եկեղեցիների միության հարցով: Նրանք նաև առաջարկում էին, որ հայերն ընդունեն երկու բնության քաղկեդոնական բանաձևը: Նամակը հանձնում են Հերոպոլսի Կոստանդին մետրոպոլիտին, որպեսզի նա անմիջապես մեկնի Հռոմկլա՝ որպես կայսերական պատգամավոր և պատրիարքարանի նվիրակ: Նա պետք է անմիջապես ներկայացներ կայսերական պահանջները և դրանք քննարկման դներ: Նամակն ավարտվում էր հետևյալ խոսքերով. «Եւ զկնի ձեր պատուականութիւնդ և ամենայն սրբազան քահանայապետիցդ Հայոց՝ առանց հակառակութեան և երկմտութեան, միաբանութեամբ և համարձակութեամբ, զհամադրութիւն հավատոյ վասն բարեպաշտ խոստով անութեան ձեր գրով առնել և առ մեզ առաքել ի ձեռն պատուական եպիսկոպոսաց, որ ի ժողովոյն»[1]: Ստանալով նամակը՝ Գրիգոր Տղան ու Ներսես Լամբրոնացին քննարկեցին նրանում ներկայացված պահանջները և որոշեցին անմիջապես հրավիրել կրոնական ընդհանուր համագումար: Նրանք սկսեցին համագումարին մասնակցելու հրավերներ ուղարկել նրանց, ովքեր պետք է մասնակցեին: Բոլոր մասնակիցները չէին, որ համաձայն էին երկու բնության բանաձևների ընդունմանը: Հյուսիսային Հայաստանի վար-

[1] **Հակոբյան Գ.,** նշվ. աշխ., էջ 73-74:

դապետները բոլորովին դեմ էին այն տեսակետին, որ այդ հարցը պետք է քննարկվի: Կաթողիկոսին ուղղված իրենց նամակներում նրանք սուր քննադատությունների են ենթարկում առհասարակ քաղկեդոնականությունը: Նրանք խիստ կասկածանքով էին վերաբերում հույների ցանկացած առաջարկությանը: Ներսես Լամբրոնացին և Գրիգոր Տղան չէին կարող հաշվի չառնել հայ վարդապետների կարծիքները: Նախ և առաջ, նրանք շատ հարցերով համամիտ էին վարդապետների տեսակետներին, և հետո, այդ վարդապետները այդ ժամանակաշրջանում բավականին ազդեցիկ դիրք ունեին հայ ժողովրդի եկեղեցական կյանքում: Եվ ահա տեղի ունեցավ Հռոմկլայի եկեղեցական ժողովը:

Այսպիսով, Հռոմկլայի ժողովը գումարվեց Գրիգոր Տղայի օրոք՝ քննելու համար հայ և հույն եկեղեցիների միության խնդիրները: Հույները պահանջում էին քաղկեդոնական բանաձևերի և հետագա տիեզերական ժողովների ընդունումը, իսկ հայերը դեմ էին և ապացուցում էին Հայ եկեղեցու ուղղափառությունը: Այդ ժողովին ներկա են եղել 33 հոգևորականներ Մեծ Հայքից, Կիլիկիայից: Ներկա էր նաև Աղվանից կաթողիկոսը և ասորիների պատրիարքի ներկայացուցիչը: Այս ժողովը մի կողմից նզովեց ծայրահեղ միաբանությունը և մյուս կողմից մերժեց նաև երկբնակությունը՝ հավատարիմ մնալով Հայ եկեղեցու ավանդական դավանանքին:

Ներսես Լամբրոնացին հավաքել է միության խնդրին վերաբերող թղթերը, տվել է պատմական ծանոթություններ, սակայն Հռոմկլայի ժողովից մնացել է միայն երկու վավերագիր. մեկը՝ կայսեր, իսկ մյուսը՝ հունական պատրիարքի նամակների պատասխանները: Չնայած, որ այդ նամակներն ունեին շատ համարձակ բովանդակություն, այնուամենայնիվ դրանք թշնամական բնույթ չունեին: Հայերը մշտապես ցանկանում էին եկեղեցիների միության հարցը լուծել իրավահավասար սկզբունքներով՝ չդիպչելով ո՛չ հայերի, ո՛չ էլ հույների ազգային եկեղեցու դավանանքին ու սկզբունքներին:

Լամբրոնացին Հռոմկլայում մնում է մինչև 1180 թ.: Վերադառնալով Լամբրոն՝ նա անցնում է հոգևոր առաջնորդի իր պարտականությունների կատարմանը:

Գրիգոր Տղա կաթողիկոսը ցանկանում էր ընտրել մեկին, ով կկարողանար նպաստել հույների հետ հարաբերությունների ու մտերմության խնդրին: Այդ ժամանակ Լամբրոնացին Գրիգոր Տղայի ձեռքի տակ էր և նրա մտերիմ օգնականն էր: Ներսես Լամբրոնացին 1178 թ. մասնակցել է

Հռոմկլայի եկեղեցական ժողովին, Լևոն Բ Ռուբինյան իշխանի հանձնարարությամբ ուղարկվել է դիմավորելու Ֆրիդրիխ Շիկամորուսի (Բարբարոսա) գլխավորած երկրորդ խաչակրաց բանակին (1189 թ.), պաշտոնագիտական դեսպանագնացությամբ այցելել է Կ. Պոլիս (1197 թ.), մասանկցել Կիլիկյան Հայաստանի արտաքին գործերի կարգավորմանը[1]:

Ներսես Լամբրոնացուն վստահվել են նաև այլ կարևոր ուղևորություններ: Երբ Լևոն Բ-ի ջանքերով Կիլիկիան դարձավ Միջերկրական ծովի արևելյան ափի ամենազորեղ իշխանություններից մեկը, ստեղծվեցին բոլոր նախադրյալները Կիլիկիայի հայկական իշխանությունը թագավորություն հռչակելու համար: Լևոն Բ-ին թագ ուղարկելու համաձայնություն է հայտնում Բյուզանդիայի Ալեքսիոս կայսրը (1195-1208): Կ. Պոլիս է ուղարկվում հատուկ պատվիրակություն՝ Ներսես Լամբրոնացու գլխավորությամբ: Լամբրոնացին մեկնում է Բյուզանդիա՝ իմանալու արքայական տիտղոս ստանալու պայմաններն ու հանգամանքները, քանի որ դրա հետ էր կապված Կիլիկիան հայկական թագավորության և հայ եկեղեցու անկախության հարցը: Կայսրը հայոց իշխանին առաջարկում է թագ ստանալ Բյուզանդիայից, այլ ոչ թե Հռոմեական Սրբազան կայսրությունից, քանի որ Կիլիկյան ավելի մոտ էր Բյուզանդիային: Ալեքսիոս կայսեր նպատակն էր հայերին ամեն կերպ հեռու պահել Հռոմից ու Գերմանիայից և կապել իրենց հետ: Լամբրոնացու գլխավորած պատվիրակության նպատակն էր ոչ միայն Լևոն թագավորի շնորհակալությունները տանել Բյուզանդական կայսրին, այլև նորից քննել հունական և հայկական եկեղեցիների միության հարցը: Հույներն արդեն բազմիցս լսել էին Լամբրոնացու մեծ համբավի մասին: Օրեր շարունակ վիճաբանություններ են տեղի ունենում բյուզանդական եկեղեցու ներկայացուցիչների և Ներսես Լամբրոնացու միջև: Հույների կողմից խոսում են շատ անվանի հռետորներ ու գիտնականներ: Վիճաբանության գլխավոր առարկան էր երկու բնության հարցը, Քաղկեդոնի որոշումները, և հայերի ու հույների միջև եղած ծիսական ու դավանաբանակ անտարբերությունները: Լամբրոնացին ստիպված էր միայնակ դուրս գալ բյուզանդական եկեղեցու անվանի ներկայացուցիչների դեմ և պատասխանել նրանց բազմաթիվ հարցերին: Նա տարբեր տեսանկյուններից մեկնաբանում է հայ եկեղեցու դիրքորոշումը դավանաբանական մի շարք հարցերի շուրջ: Լամբրո-

[1] **Սմբատ Սպարապետ**, Տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 207:

նացուն հաջողվում է հաղթանակած դուրս գալ այս բազմամարդ ժողովից: Նա բյուզանդացիների մոտ թողնում է բազմակողմանի և հաստատուն գիտելիքների տեր մտավորականի տպավորություն, ով օժտված էր տրամաբանական կուռ մտածողությամբ և բարձր հռետորական ունակություններով: Բայց, այնուամենայնիվ, Լամբրոնացին գոհ չմնաց ժողովի որոշումներից, քանի որ չհասավ իր վերջնական նպատակին: Դեռ իր գործունեության սկզբից նրա նպատակն էր համերաշխություն ստեղծել ազգերի և եկեղեցիների միջև: Նրա սպասումներն այդպես էլ չարդարացան, որովհետև հույները դրսևորեցին բոլորովին հակառակ տրամադրություններ: Նրանք ազգերի և եկեղեցիների միության խնդրում հետապնդում էին ոչ թե քրիստոնեական մարդասիրական սկզբունքներ, այլ ձգտում էին իրենց տիրապետությունը հաստատել փոքր ու թույլ ազգերի վրա:

Լամբրոնացին դեռևս վաղ երիտասարդ տարիքից սկսում է գրել երկասիրություններ, որոնք աչքի են ընկնում իրենց խոհական ու հմուտ պարունակությամբ: Ձեռնադրվելուց անմիջապես հետո նա սկսում է գրել Պատարագի մեկնությունը, որն ավարտում է 1177 թ., և մյուս տարի գրում է Առակաց գրքի մեկնությունը: Ձեռնադրության երրորդ տարում նա թարգմանում է Հայտնության մեկնությունը և սկսում սաղմոսների մեկնությունը: Միևնույն ժամանակ Լամբրոնացին գրում է նաև ճառեր ու շարականներ, հանդես է գալիս Սուրբ գրքի մեկնաբանություններով: Ահա տեղեկանալով այս բոլոր մանրամասներին, մենք կարող ենք միայն համոզված լինել, որ Ներսես Լամբրոնացին եղել է իր ժամանակի ամենահմուտ ու գիտակ մարդկանցից մեկը: Նա ոչ միայն վարել է իր զբաղեցրած եկեղեցական պաշտոնը, այլ նաև եղել է ընթերցանության ու գիտության մեծ նվիրյալ: Տարսոնում, Լամբրոնում, Սաղրիում, Հռոմկլայում, Սև լեռներում, Սկևռայում ծավալած իր բուռն գործունեությամբ Ներսես Լամբրոնացին մեծապես նպաստել է Կիլիկյան Հայաստանի հոգևոր ու մշակութային կյանքի զարգացմանը: Նա իր հորից ժառանգած նյութական միջոցներով օժանդակել է դպրոցներին, գրադարաններին, գրչատներին, 30 հազար ոսկի դահեկան է նվիրաբերել ձեռագրերի զննմանն ու ընդօրինակմանը, վանքերի և եկեղեցիների կառուցմանը: Նա պատվիրել կամ էլ հենց ինքն է անձամբ ընդօրինակել բազմաթիվ հին հայկական ձեռագրեր, որոնք ոչ ամբողջությամբ, բայց հասել են մեզ: Ներսես Լամբրոնացու պատվերով ընդօրինակված Գրիգոր Նարեկացու «Մա-

տյան ողբերգության» երկը մեզ հասած ամենահին (1173թ.) ու լավագույն ձեռագիրն է, որն այժմ պահվում է մատենադարանում:

Հայ բանավիճային գրականության ընտիր նմուշներից է Ներսես Լամբրոնացու «Թուղթ առ Լևոն արքայն» երկը, որով Լամբրոնացին ցանկացել է հերքել արևելյան վարդապետների՝ իր դեմ հարուցած մեղադրանքները: Բանն այն է, որ այդ ժամանակաշրջանում Կիլիկիայում և Հյուսիսային Հայաստանում գոյություն ունեին երկու տարբեր ուղղություններ: Դրանցից մեկը ղեկավարում էին Գրիգոր Տուտեորդին և Դավիթ Քոբայրեցին, իսկ մյուսը՝ Գրիգոր Տղան և Ներսես Լամբրոնացին: Դրանցից ամեն մեկը հանդես էր գալիս իր առանձին դիրքորոշմամբ: Առաջին ուղղության հետևորդները կտրված էին արտաքին աշխարհից և շատ քիչ շփում ունեին արևմուտքի երկրների հետ: Արևելքի հոգևորականները հիմնականում պահպանողական ու ավանդապահ էին: Նրանք վտանգավոր էին համարում դրսից ներթափանցած ցանկացած նորություն՝ համարելով, որ այդ նորամուծությունները աղավաղում են իրենց դարերից եկած դավանանքը: Իսկ Ներսես Լամբրոնացին ցանկանում էր որոշակի նորամուծություններ մտցնել հայ ժողովրդի կյանքում: Ահա այս բարեփոխումների դեմ էին, որ ծառացան Տուտեորդին և Քոբայրեցին: Այստեղից է, որ ծայր է առնում արևելյան վարդապետների ու Լամբրոնացու միջև պայքարը: Արևելյան և արևմտյան վարդապետների միջև պայքարը սուր ընթացք ստացավ հատկապես Ներսես Շնորհալու մահից հետո: Արևելցիները համարում էին, որ այնպիսի տաքարյուն ու բռնկվող մարդը, ինչպիսին Լամբրոնացին էր, չէր կարող ճիշտ ու հանդարտ կերպով կառավարել եկեղեցու գործերը: Ըստ նրանց՝ Ներսեսը չէր կարող խաղաղության միջնորդ դառնալ եկեղեցիների մերձեցման գործում, քանի որ հենց ինքն անձամբ խաղաղ չէր իր էությամբ: Արևելցիները նամակներ են գրում Լևոն թագավորին, որոնցում քննադատում են Լամբրոնացու գործունեությունը: Նրանք թագավորից պահանջում էին դադարեցնել Լամբրոնացու բարեկարգությունները հայ եկեղեցում, հեռացնել նրան արքունիքում ունեցած պաշտոնից, Տարսոնի առաջնորդությունից և Սկևռայի վանահայրությունից: Ստանալով նամակները՝ Լևոնը երկար ժամանակ մտածում էր ինչպես վարվել: Եթե նա ընդառաջ գնար վանահայրերին ու կատարեր նրանց պահանջները, կզրկվեր պալատական մի ուժեղ գործչից, որի կարիքն արքունիքն զգում էր ամեն ժամանակ: Իսկ եթե Լևոնը չկատարեր վարդապետների պահանջները, այն ժամանակ

նա կզրկվեր Արևելյան Հայաստանի մի մեծ ազգային հատվածից, որը քաղաքական ասպարեզում շատ կարևոր նշանակություն կարող էր ունենալ հետագա ծրագրերի իրականացման գործում: Երկար մտածելուց հետո Լևոնը դիվանագիտական նուրբ ձևով հեռացնում է Լամբրոնացուն արքունիքից՝ արևելցիների համակրանքը շահելու համար: Նա իր մոտ է կանչում Լամբրոնացու եղբորը՝ Հեթումին, նրան ամեն ինչ հանգամանորեն բացատրում և հանձնարարում, որ հայտնի Լամբրոնացուն, որ վերջինս հեռացվում է արքունիքից իր սխալ պահվածքի համար: Երբ Լամբրոնացին լսում է այս ամենը, խիստ զայրանում է, ապա մի երկու օր հետո խաղաղվում է ու գրում իր հռչակավոր թուղթը: Լամբրոնացին գրում է, թե իր հակառակորդների բերանները անեծքով ու դառնությամբ լի են, և իժի թույն ունեն իրենց շրթունքների ներսում[1]:

Ներսես Լամբրոնացին եղել է հայ առաքելական եկեղեցու ինքնուրույնության և պետականության մեծ գաղափարախոսներից: Պայքարել է հայ եկեղեցու և Կիլիկյան Հայաստանի անկախության և բարեկարգության համար[2]:

Իր ճարտասանական հիանալի կարողությունների համար Ներսես Լամբրոնացին վաստակել է հմուտ հրապարակախոսի և քարոզչի համբավ: Նրա աշակերտները՝ Խաչատուր Սկևռացին, Գրիգոր Սկևռացին, նրան են նվիրել բազմաթիվ երկեր, նաև գրել են իրենց ուսուցչի կյանքն ու գործունեությունը նկարագրող գործեր: Լամբրոնացին հայ և օտար շատ հեղինակների կողմից բազմաթիվ անգամներ համեմատվել է Կիկերոնի, Հովհան Ոսկեբերանի և այլոց հետ: Լամբրոնացին ուներ դրականն ու բացասականը գնահատելու ընդունակություն: Նա հայ էր ու հայասեր, բայց ոչ հայամոլ: Նա հայ ազգային գործիչ էր, բայց ոչ նեղ ու սահմանափակ մտածելակերպով, ինչպիսին էին այն ժամանակվա հույն ու լատին եկեղեցական ու պետական գործիչներից շատերը: Լամբրոնացին հույներից ընդօրինակում էր միայն այն, ինչն ազգօգուտ ու առաջադիմական էր: Բայց այն ամենը, ինչը բացասական դրսևորում էր ունենում հույների մոտ, Լամբրոնացին երբեք չէր արդարացնում:

Երկրի ներքին ու արտաքին կյանքի հետ կապված խնդիրների քննությունն արքունիքում առանց Լամբրոնացու չէր կատարվում: Կրո-

---

[1] **Օրմանյան Մ.,** Ազգապատում, Հատոր Ա, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001, էջ 785:

[2] Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, Երևան, 2002, էջ 783:

նական-եկեղեցական որևէ լուրջ հարց կաթողիկոսարանը առանց Լամբրոնացու խորհրդի չէր լուծում: Նա արքունիքի և հայրապետական աթոռի խորհրդատուն էր, բոլոր պատգամավորությունների գլխավորողը, վստահելի անձը և կարող ուժը[1]:

Կիլիկիայում գործող եկեղեցական անձանց մեջ Ներսես Լամբրոնացին առանձնանում է բոլորից: Դժվար է հիշատակել ևս մի եպիսկոպոս, ով այդքան երիտասարդ տարիքում այդքան աչքի ընկներ իր մտավոր զարգացվածությամբ, եռանդով ու ազդեցիկ դիրքով: Նրա կյանքը լի էր փոթորիկներով: Նրան մեծ ցավ պատճառեց այն, որ Լևոնի հրամանով հեռացվեց արքունիքից:Դա չէր կարող չազդել նրա դյուրագրգիռ ու նրբբազգաց բնավորության վրա: Գուցե դա ևս նրա վաղաժամ մահվան պատճառներից մեկն էր: Լամբրոնացին մահացավ 1198 թ. հուլիսին: Նա մահանում է արտառոց պայմաններում: Ներսեսը զգեստավորված պատարագ էր մատուցում Սկևռա Սուրբ Աստվածածնի եկեղեցում, երբ պատարագելիս կաթվածահար է լինում ու մահանում: Նրա հուղարկավորությունը շատ շքեղ ու բազմամարդ էր: Հուղարկավորությանը ներկա են եղել Կիլիկիայի ողջ հոգևորականությունը, Տարսոնի և Լամբրոնի շրջանի ժողովուրդը, հոգևոր ու մարմնավոր իշխանությունների պետերը և այլոք: Հուղարկավորության արարողությունից հետո Լամբրոնացու մարմինն ամփոփվում է Սուրբ Աստվածածին եկեղեցու պատի տակ: Հենց նրա մահվանից հետո էր, որ իր աշակերտներից Խաչատուր Սկևռացին մի սրտառուչ Ողբ ձոնեց Լամբրոնացուն՝ գովերգելով նրա արտակարգ տաղանդը, եռանդուն, բեղմնավոր կյանքը և մյուս բարեմասնություններն ու առաքինությունները: Կարծես զգալով մոտալուտ ու անակնկալ վախճանը, Լամբրոնացին ձգտում էր թղթին ու պատմությանը հանձնել լայնախոհ մտորումները, իր քրիստոնեական հոգու լույսն ու ջերմությունը, «քառատրոփ» ապրել իր մեծ կյանքը, որ հանուն մարդկանց ու Աստծո մոմի անմնացորդ այրում եղավ, մոմի պես էլ հանգավ մի ակնթարթում[2]:

---

[1] **Հակոբյան Գ.,** նշվ. աշխ., էջ 80:

[2] **Անանեան Գ.,** Ներսես Լամբրոնացին հրապարակախոս, Անթիլիաս, 1995, էջ 10:

## ՆԵՐՍԵՍ ԼԱՄԲՐՈՆԱՑՈՒ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

***Լիանա Դալլաքյան***

***Բանալի բառեր՝*** *Կիլիկիա, Ներսես Շնորհալի, Սկևռայի վանք, Տարսոն, Գրիգոր Դ Տղա, Սսի համալսարան, քաղկեդոնականություն, Հռոմկլայի եկեղեցական ժողով, Պատարագի մեկնություն, «Թուղթ առ Լևոն արքայն»:*

Սույն հոդվածում անդրադարձ է կատարված Կիլիկյան Հայաստանի հայտնի գործիչ Ներսես Լամբրոնացու կյանքի ու գործունեության որոշակի մանրամասների: Ներսես Լամբրոնացին այն եզակի գործիչներից է, ով մեծ ներդրում է ունեցել թե՛ հոգևոր-կրոնական, թե՛ քաղաքական, և թե՛ դիվանագիտական բնագավառներում: Նա, թեև աչքի է ընկել իր բռնկուն բնավորությամբ, բայց, այնուամենայնիվ եղել է բավականին մարդասեր և հոգատարությամբ աչքի ընկնող գործիչ: Նրա տաքարյուն բնավորությունն ամենից շատ դրսևորվում է վարդապետների հետ հակասությունների ժամանակ, ինչի մասին խոսվում է հոդվածում: Վստահաբար կարող ենք ասել, որ Լամբրոնացին մշտապես իր ուշադրության կենտրոնում է պահել հասարակ ժողովրդին, ինչը շատ կարևոր փաստ է եկեղեցական գործչի մասին կարծիք ներկայացնելիս: Բացի նրանից, որ զբաղվել է եկեղեցական ու քաղաքական լուրջ գործունեությամբ, նաև ծավալել է գրական լայն գործունեություն: Այսպիսով կարելի է հավաստել, որ Ներսես Լամբրոնացին եղել է իր ժամանակի ամենից հաստատուն բնավորություն, կուռ մտածողություն և մարդասիրական բարձր արժեքներ ունեցող գործիչներից մեկը:

## ЖИЗНЬ И ДЕЯТЕЛЬНОСТЬ НЕРСЕСА ЛАМБРОНАЦИ

***Лиана Даллакян***

***Ключевые слова:*** *Киликия, Нерсес Шнорали, монастырь Скевра, Тарсон, Григор Д Тха, университет Сиса, халкидонизм, сабор в Ромкле, толкование Литургии, «послание к царю Левону»:*

В данной статье затронуты некоторые подробности жизни и деятельности знаменитого деятеля Киликийской Армении Нерсеса Ламбронаци (Ламбронский). Нерсес Ламбронаци является одним из тех исключительных деятелей, который имел большой вклад и в духовно-религиозной, и политической, и дипломатической сферах. Несмотря на то, что он отличался своим вспыльчивым характером, он, тем не менее, был довольно гуманным и заботливым деятелем. Его раздражительный характер больше всего проявляется в разногласиях с вардапетами, к чему мы коснёмся в данной статье. С уверенностью можно сказать что

Ламбронаци держал всегда в центре внимания простой народ, что является очень важным фактом в жизнеописании церковного деятеля. Помимо серьезной церковной и политической деятельности, он развернул также широкую литературную деятельность. Таким образом, можно утверждать, что Нерсес Ламбронаци был одним из представителей своего времени, кто обладал самым стойким характером, твердым мышлением, и гуманистическими высокими ценностями.

## LIFE AND ACTIVITY OF NERSES LAMBRONATSI

***Liana Dallaqyan***

***Key words:*** *Cilicia, Neses Shnorhali, Skevra monastery, Tarson, Grigor D Tgha, University of Sis, chalsedonianism, Hromkla Church Council, interpretation of Liturgy, "Papers to Levon King".*

The article is on the certain detals conserning the life and activity of Nerses Lambronatsi, a known activist in the Cilician Armenia. Nerses Lambronatsi is one of the unique social leaders who had great input in both the spiritual-religious and the diplomatic life spheres. He, though being a hot and bothered person, was very human and caring towards the people. His hot-tempednes was namely manifested during the controversies with the religious people, the fact which is given a special place in the article. The article puts the stress on the fact that Lambronatsi had always kept his attention on the common people, which, in its turn, is the main merit of a servant for the native people. He had carried out not only church and political activities but also had organized wide literary avctivities.

Thus we can surely state that Nerses Lambronats was one of the activists possessing the characteristics of a stable personality, incorporate judgment and deep humanistic values.